

## **Առաջադրանք N 2**

Տևողությունը՝ 50 րոպե

(Աշխատանքը գնահատվում է առավելագույնը 19 միավոր)

### **Ուշադրություն**

**Պատասխանները լրացնել միայն ձևաթղթում: Այս հարցաթերթերի վրա նշումներ չանեք,**

**այլապես կը որդքներ 2 միավոր:**

**Տերևներից օրի գույքը շահագույք որոշումը**

**Նպատակը՝**որոշելութերսիմիավորմակերեսիցմիավորժամանակումգոլորշիացողջրիքանակը:

**Անհրաժեշտ պարագաներ և սարքավորում՝**

1. Զրով հազեցած (չթառամած) նույն տեսակի տերևներ (3 հատ)
2. Չոր անձեռոցիկներ
3. Քանոն
4. Նշտար
5. Ապակի կամ լամինատե տախտակ
6. Ունելի
7. Ժամացույց
8. Կշեռք
9. Վանդակավոր թուղթ (տետր)
10. Հաշվիչ

**Կշռելուգործքները.**



### **Էլեկտրական կշեռքի տեսքը**

Միացնել հոսանքը՝ դնելով On դիրք իկշեռքի ետին վահանակի վրայի անջատիչը: Կշեռքի առջևի վահանակի մոնիթորին կերեան 8.8.8.8.8. թվերը, մի քանի վայրկյանան՝ 0.00 : Արդեն կարելի է կշռել: Բացել կշեռքի կափարիչը: Ունելի օգնությամբ տեղադրել կշռվող մարմինը, սպասել մի քանի վայրկյան և գրանցել ցուցմունքը: Այդ ցուցմունքը զրոյացնելու համար սեղմել CON կոճակը: Փորձի վերջում կշեռքը անջատել հոսանքից:

## Փորձի ընթացքը և ամփոփումը

ա) Անձեռոցիկով զգուշությամբ մաքրել տերևների մակերեսը փոշուց և ջրի կաթիներից: Նշտարով զգուշությամբ անջատել տերևակոթունը տերևաթիթեղից:

բ) Կշռել 3 տերևները միասին: Տվյալները գրանցել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 1-ում: Տիքսել կշռման ժամանակը և տերևները տեղադրել պլաստմասե տախտակի վրա՝ ստորին մակերեսով դեպի վեր:

գ) 20 րոպեի ընթացքում՝ յուրաքանչյուր 10 րոպեն մեկ կշռել երեք տերևները միասին, հաշվել այդ կետերում ջրի կորուստը (մգ) և գրանցել տվյալները պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 1-ում:

դ) 20 րոպեից հետո նշտարի և քանոնի օգնությամբ(դնելով քանոնը տերևաթիթեղի վրա և նրա եզրով կատարելով կտրվածքը)որևէ տերևաթիթեղից առանձնացնել հնարավորինս մեծ ուղղանկյուն քառանկյուն, արագ կշռել այն և տվյալները տեղադրել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 2-ում:

ե) Չափել յուրաքանչյուր քառանկյան երկարությունն ու լայնությունը, գրանցել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 2-ում:

գ) Հաշվել յուրաքանչյուր քառանկյան մակերեսը, գրանցել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 2-ում:

Ե) Ստացված տվյալներից տերևաթիթեղների գումարայինմակերեսը(S<sub>tot</sub>) հաշվելու համար դուրս բերել բանաձև՝ օգտագործելով հետևյալ փոփոխականները.

S<sub>p</sub>-ն տերևաթիթեղից կտրածքառանկյան մակերեսն է

M<sub>tot</sub>-ն տերևաթիթեղի զանգվածը

M<sub>p</sub>-ն տերևաթիթեղից կտրած քառանկյան զանգվածն է

Բանաձևը գրանցել պատասխանների ձևաթղթում:

ը) Օգտագործելով դուրս բերված բանաձևը հաշվել տերևաթիթեղների գումարային մակերեսը՝ համարելով, որ գոլորշիացումը կատարվել է միայն ստորին մակերեսից: Հաշված արժեքը գրանցել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 2-ում:

թ) Օգտագործելով պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 1-ի և աղյուսակ 2-ի տվյալները, հաշվել 0-20 թ ժամանակահատվածի ընթացքում 1 րոպեում 1մմ<sup>2</sup>-ուց գոլորշիացած ջրի քանակը՝ միլիգրամներով: Գրանցել պատասխանների ձևաթղթում բերված աղյուսակ 1-ի վերջին սյունակում համապատասխան վանդակում:

ժ) Կոռրդինատային հարթության վրա կառուցել ջրի գոլորշիացման կախման գրաֆիկը ժամանակից: Կոռրդինատային առանցքների վրա նշել փոփոխականները և նրանց միավորները:

ի) Լուծել թեստերը և պատասխանները գրանցել աղյուսակ 3-ում:

**Մաղթում ենք հաջողություն**

## Թեսութեր

Պատասխանել հերձանցքների կառուցվածքին և ֆունկցիային վերաբերվող հարցերին  
(յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 1 միավոր)

1. Քանի՞ բջիջներով է շրջափակված հերձանցքը

- |      |      |
|------|------|
| ա. 2 | գ. 4 |
| բ. 3 | դ. 6 |

2. Ի՞նչ տեսք ունեն հերձանցքը շրջափակող բջիջները

- |                 |                |
|-----------------|----------------|
| ա. զնդաձև       | գ. խորանարդաձև |
| բ. կիսալուսնաձև | դ. պարուրաձև   |

3. Ինչպիսի՞ն են հերձանցքը շրջափակող բջիջների պատերը

- |                            |                                                                                    |
|----------------------------|------------------------------------------------------------------------------------|
| ա. բարակ են բոլոր կողմերից | գ. դեպի հերձանցքային ճեղքն ուղղված պատերը հաստ են, իսկ հակառակ կողմի պատերը՝ բարակ |
| բ. հաստ են բոլոր կողմերից  | դ. դեպի հերձանցքային ճեղքն ուղղված պատերը բարակ են, իսկ հակառակ կողմի պատերը՝ հաստ |

4. Ո՞ր հյուսվածքի կազմում են գտնվում հերձանցքը շրջափակող բջիջները

- |             |             |
|-------------|-------------|
| ա. փոխադրող | գ. ծածկող   |
| բ. հիմնական | դ. գոյացնող |

5. Ինչպիսի՞ն են հերձանցքը շրջափակող բջիջները

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| ա. մահացած և լցված օդով | գ. կենդանի և կանաչ      |
| բ. կենդանի և անզույն    | դ. մահացած և լցված ջրով |

6. Ե՞րբ են բացվում հերձանցքները

- |                                                     |                         |
|-----------------------------------------------------|-------------------------|
| ա. երբ շրջափակող բջիջների մեջ շատ ջուր է լցվում     | գ. կենդանի և կանաչ      |
| բ. երբ շրջափակող բջիջների միջից շատ ջուր է հեռանում | դ. մահացած և լցված ջրով |
| գ. երբ շրջափակող բջիջների մեջ շատ թթվածին է մտնում  |                         |
| դ. երբ շրջափակող բջիջներում կուտակվում է օվա        |                         |

7. Զրային բույսերի ստորգրյա տերևներում հերձանցքները

- |                                                                |                         |
|----------------------------------------------------------------|-------------------------|
| ա. գտնվում են հիմնականում տերևի վերին մակերեսին                | գ. կենդանի և կանաչ      |
| բ. գտնվում են հիմնականում տերևի ստորին մակերեսին               | դ. մահացած և լցված ջրով |
| գ. դասավորված են հավասարապես տերևի վերին և ստորին մակերեսներին |                         |
| դ. բացակայում են                                               |                         |